18 հոկտեմբերի 2023թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

<<Խոնդատ>> ՍՊԸ-ի
տնօրեն՝ Զավեն Հարությունյանին

Հարգելի Զավեն Հարությունյան

<<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <<Խոնդատ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի օգոստոսի 28-ին կնքված **ԲՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/2-3** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչ օրս մատակարարում չի կատարել:

2023թ.-ի հոկտեմբերի 17-ին Վաճառողը գրությամբ դիմել է Գնորդին, ըստ որի հրաժարվում է կատարել **ԲՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/2-3** ծածկագրով գնման Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հարկադրված է 2023թ.-ի հոկտեմբերի 17-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 22477,5 (քսաներկու հազար չորս հարյուր յոթանասունյոթ ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամի և 14985 (տասնչորս հազար ինը հարյուր ութսունհին) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ ֆինանսների նախարարություն, Հ/Հ 900108000275)**,

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն <<Խոնդատ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի

տնօրեն՝ **Մ. Սարգսյանի**